



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

The image shows the front cover of an old book. The cover is decorated with a marbled paper pattern consisting of dense, wavy, concentric lines in shades of blue, yellow, and white, set against a dark reddish-brown background. The spine of the book is visible on the left side, appearing dark and worn. A small, rectangular, light-colored paper label is affixed to the bottom left corner of the cover. The label has a double-line border and contains handwritten text in blue ink. The text is arranged in two lines: the top line reads 'L50' and the bottom line reads '1035'.

L50

1035

1999

4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԵԼՈՅ ԽՆԱԺՈՂ  
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՅ

ԵՐՐՈՐԴ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

1122

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈԲՅԱՆ ՊՅՅԱՃԵԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԵԼՈՅ ԽՆԱՄՈՂ

## ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՅ

ԵՐՐՈՐԴ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայաստանեայց սովերոյ Խնամող Կեդր. Յանձնաժողովն, իւր ձմեռնային պարտաւորութիւններն և դարնանային վարուցանքն, ըստ կարելոյն, աւարտել աշխատած՝ և եղանակին փոփոխամբ նոր պարտաւորութիւններ ստանձնած, իւր բիւրաւոր թշուառներովն շրջապատեալ, երրորդ յայտարարութիւն մի ի ձեռին, կուգայ այսօր ողջունել զգարուն, որով զուարճացեալ դաշտաց բազմացն ի վերայ առ այժմ՝ գրեթէ միայն յոյս և խոտ կը բուսանի ի Հայաստան :

Անցաւ թեփի, կուսպի և խառնակութեանց ուտման եղանակն, անցաւ լեղահամ արմատոց և դիականցն դիշից լափման ժամանակն, դադարեցաւ կճախառն մանանայ և ոսկր կրծող ատամանց կրճտիւնն, արդ եհաս ժամ խոտակերութեան :

Հայաստան աշխարհին հարիւրաւորովք սովամահ Հայ բնակիչն, ի ժամանակի այս մահաթոյն անդականութեան, հայրական պարտուց զգացմամբն մոլեալ, թէև երբեմն երբեմն անձնասպան և որդեսպան եղև, այլ ի պատիւ իւր նախնի բնաւորեալ կրթութեան և իւր հնարագէտ աշխատասիրութեան, երբէք իւր նմանւոյն դիականն ոչ մերձեցաւ :

ՁԲ. 1035

4 1035-60

Այլ այսօր այս մարդն չար քան զառաջինն կը կորնչի, ոչ մի-  
այն ի քաղցէ, այլ և յախտէ, որոյ առաջին դարմանն հաց և աղ  
է, և առողջարար սնունդ, այլ աւանդ, ո՛ր է այս սնունդ:

Հրամայեց իշխանութիւնն, տեղափոխեցան Հայաստանի ա-  
ռատահունձ գաւառացն ոմանց ամբարք, սակաւ ինչ յաղեցան  
Միջագետք, այլ թշուառ հայու Հայրենիք, որչափ սովեալ, նոյն-  
չափ և առատասեղան գաւառաց տէր, մերթ սառնամանեաց,  
ապա ողորմանց դէմ միջել՝ պարտաւորեալ, դեռ հացի կ'ըս-  
պասէ:

Մէր, դուժ, իշխանութիւն, ամենեքեան զինեցան զՀայաս-  
տան ի քաղցէ փրկելու, այլ ամենայն ձեռք կարկամեցան, զի  
Հայաստան լեռնային և մառնապատ ի ձմերան, այնպիսի աշխարհ  
մի է, ուր անկարելի է զթութեան մտանել, եթէ նախատեսու-  
թիւնն մարդոյ նախապատրաստեալ ոչ սմա կարապետէ:

Կեդր. Յանձնաժողովս կարի շատ այս տխուր ճշմարտութիւնն  
փորձեց: Հրաւէր կարգաց բարեգործութեան, և երբ աշխարհ  
արգահատելով թշուառին, զթութեան դանձն երաց, հարկադ-  
րեցաւ Յանձնաժողովս նպատից այս սուրբ սղբեր հոսանքն չա-  
փաւորել, զի մի՛ անօգուտ դրամոց իբրև հաւաքիչ դատապար-  
տի, երբ անկարելի էր, յաննման խտտութեան ձմերայնի, հեռա-  
ւորութեանց յաղթելով, զոտս օգտակարապէս մատակարարել:

Սակայն այսօր, որ սովն ալ յայտնի և աշխարհածանօթ է,  
այսօր, որ օգնականութեանց և հաղորդակցութեանց ճանապարհք  
բաց են, ազատ և համարձակ, իւր աղերսարկու ձայնն կը բարձ-  
րացնէ:

Այս առթիւ պարտ անձին կը համարի Յանձնաժողովս, ու  
ղորմած բարեսիրաց նոր նուէրներն չընդունած, նախ իւր գան-  
ձուն մինչև ցարդ սւանդեալ նպատից գործածութեան համա-  
ռօտ տեղեկութիւն մի տալ:

Յանձնաժողովս, Ամենապատիւ Տեառն Տեառն Ներսիսի Հա-  
յոց Պատրիարքի ի ձայն, յանկեան Քաղկեդոնի ի 6 Յունվար 1880

կազմեալ, և ապա պիտոյից ստիպմամբ կեդրոնական ձեռն ու ա-  
նունն ստանալու պարտաւորեալ կամաւորաց մի խմբակ, նախ  
Վանայ և գլխաւորապէս Պայազխտի և Ալաշկերտի աշխարհացն  
Հայոց օգնել ձեռնարկած էր, աշխարհք՝ որոյ բնակիչք, որպէս  
ծանօթ է ամենեցուն, ի յետին պատերազմի նախ դաղթել, ա-  
պա վերադառնալ պարտաւորեալ, զուրկ յանասնոց զուրկ ան-  
գամ յերկրագործական կարևոր գործեաց, աննման չքաւորու-  
թեան մէջ կ'ապրէին:

Կեդր. Յանձնաժողովն այս թշուառաց հազիւ օգնել սկսեալ,  
երբ զիւր ամն հանուրց եղբարց ողորմածութեան կը կարկառէր,  
ահա հառաչանք հառաչանաց և օրհնութիւնք օրհնութեանց ձայն  
տուեալ, փոքուն Ասիոյ բաղմաթիւ գաւառք անդէն ահաւոր կա-  
րօտութեան աղաղակ մի ամբարձին, որոյ՝ երկայն ամիսներ այս  
Յանձնաժողովն գրեթէ միայնակ պատասխանեց:

Ի լու այս կարօտութեան ձայնից, Յանձնաժողովն թէև 1879  
տարւոյ երաշտութեան տեղեակ էր, այլ փոքուն Ասիոյ բնու-  
թեամբն բարեբեր աշխարհին ի մէջ, որոյ գաւառացն ոմանք ա-  
ռատահունձ անգամ եղած էին, սովոյ ներկայութեան ոչ կա-  
րելով հաւատալ, զինքն առաւել զթանկութիւն դարմանելու կոչ-  
եալ կարծեց, սակայն խաբեցաւ:

Ճշմարտապէս սովեալ էին փոքուն Ասիոյ բազում գաւառք,  
զի այլևայլ պատճառք յորս անսովոր ձմերայնի խրտտութիւն՝  
ամբարացն գաւառաց զզուգակշռութիւն արգելած էին, գլխաւո-  
րապէս լեռնային և սառնապատ Հայաստանեաց աշխարհին մէջ:

Կարին, Բասենոյ դաշտ, Բաղէշ, թշուառութեամբն աշխար-  
հածանօթ Պայազխտ, Ալաշկերտ և Գարա քիլիսէ, հարիւրաւոր  
նօթի գիւղերովն Վանայ աշխարհ, Սղերդ, Տիգրանակերտ, Մար-  
տին, Մուսուլ, և ի ծովափունս փոքուն Ասիոյ, գիւղօրէյք Պիլէ-  
ճիկի, Պրուսայի և Նիկովիդիոյ՝ այս Յանձնաժողովոյ իւրեանց  
կարօտն յայտնեցին, և եթէ ոչ յաղեցան, այլ պարգևեալ սըր-  
տաբուղիս նուիրաց ընծայմանն ոգւով մխիթարեցան:

Շնորհիւ հաւատարութեան սկզբան ի մէջ ամենայն Հայոց, զհաց զոր՝ ամենայն Հայք անխտորաբար ետուն, ամենայն Հայք կարօտեալք ի վերայ նոյն սեղանին անխտորաբար ճաշակեցին:

Աւերբոյդ կը դատի Յանձնաժողովս աստ իւր օժանդակ մարմնոց այս սկզբան հաւատարմութեանն ի վկայութիւն լրագրոց մէջ հրատարակեալ դրերն յիշատակել, այլ ձրիապէս իւր նպատակին օժանդակող Օսմանեան հեռագրատան արձանագրութիւններն ի ձեռին ունելով՝ զայս միայն իմացուցանել արժան կը համարի, որ հանդանակող իւր ամենայն մարմինք թէև Հայք էին, որ ամենայն նուէրք, հանդանակողաց թէև ազգին միայն նուիրեալ էին, որ նուիրաց գլխաւոր մասն թէև ի Հայոց կը բղխէր, այլ Հայ ազգին և ընդհանուր իւրոց բարերարաց ոգւոյն ազատ թարգման հանդիսանալով, սոցա պարգևներն ոչ միայն Հայութեան սեպհականեց, այլ ակնածութեամբ համարձակեցաւ ըստ վիճակի իւր դանձուն, մաս մի ի սմանէ և Քաղզէացի և Ասորի և Յոյն և Մահմետական և Քուրդ հայրենակցաց հանել:

Ազգաց նկատմամբ թէև այսպէս վարեցաւ Յանձնաժողովս, այլ ոչ և աշխարհաց այս գրութեամբ ծառայեց:

Հայաստանի աշխարհագրական կացութիւնն, սորա խիստ և երկարատե ձմեռն, լեռնային կազմութիւնն, գետոց բնութիւնն, ի կեդրոնէ օգնականութեանց հեռաւորութիւնն, ճանապարհաց անբաւականութիւնն ի նկատի առնելով, Տաճկաստանի գաւառաց իբրև առաւել կարօտելոյ և ճշմարիտ թշուառի, Հայաստանի և սորա հողագործ բնակչին գլխաւորապէս իւր դանձուն մեծագոյն մասն նուիրեց:

Մինչ յ'թուական գրոյս, իւր հաւաքած դրամոց ամբողջութիւն, 18000 և առաւել Օսմ. ոսկիք են:

Թէև չափաւոր է այս գումարն սովոյ պիտոյից համեմատութեամբ, այլ սա Յանձնաժողովոյս սպառաց յաջողութեանց մեծամեծ երաշխաւորութիւններ յինքն պարունակելովս, յոյժ մեծարեջի գումար մի է, ներկաց դրամական մեծ տաղնապի մէջ:

Ի գումարիս այս բովանդակեալ է, Օսմանեան Վեհ. Սուլթանին՝ ընդ հովանաւորութեամբ տուեալ պարահանդիսին հատութին կէսն, հանդէս, զոր Ազգանուէր Հայուհեաց ընկերութիւնն կարգադրեց, որ ի հոգ դաստիարակութեան Հայոց դըստերաց, սոցա սննդեան համար իսկ խորհելով, հաւաքած դրամոց կէսն, ի պատիւ Հայ կանացի սեռի, սովելոց նուիրեց:

Այս գումարին մէջ ամիտիեալ է նաև Վեհ. Ռուսաց կայսեր ողորմութեան պարգևն, Հռովմայ Քահանայապետական աթոռոյն Օրհնեալ լումայն, Հելլենական կառավարութեան եղբայրական սիրոյ նշանն, Հելլենական կարմիր Խաչի ընկերութեան արիական մարդասիրութեան ապացոյցն:

Այս գումարիս մէջ են, Բարիզու, Լճնորայի, Մէնչըսթրիի, Մարսիլեայի, Վիէննայի, Վենեակոյ, Նիու—Եօքքի և Ռումանիոյ և Պուլկարիոյ այլ և այլ քաղաքացն բնակչաց՝ իւրեանց բնակակից Հայոց պատուարժանութեամբն առաջնորդեալ առ հայրենիս սոցա ունեցած սիրոյ և գթութեան նուէրն. այս գումարիս մէջ են, դաղթական Հայոց հայրենեաց իւրեանց ուխտած ձեռքնտուութեան ապացոյցներն. Ռուսիոյ և Տաճկաստանի Հայոց հացին պատառն. մեծ սիրոյ նշան բազմութիւ օտարաց փոքրիկ սրտազին պարգևներն, և Հայ մանկութեան սրտի կրթութեան հաւատով՝ բազմութիւ վարժարանացն մանկանց ոգեզուարճ եղբայրասիրութեան պտուղներն, նուէրք՝ որոց տուողացն ամենեցուն անուանք՝ մայրաքաղաքիս լրագրոց մէջ հրատարակեալ են:

Աւերբոյդ կը համարի Յանձնաժողովս աստ մի ըստ միջէ իւր հետազօտած գթութեան աշխարհներն, ի ճանապարհի մարդասիրութեան դատած պաշտպաններն թուել և համրել:

Որպէս յեղիպտոս՝ ունի յՈվկիանեա, ՚ի Հնդկաստան, ի Պիրմանեա պատուական օժանդակ մարմիններ, ուր Հայ հանձար, ուր Հայ թշուառութիւն, իջևաններ ունի՝ յոր կարեն յուսալ մեր սննապահ թշուառ ու սովեալ եղբայրներ:

Ի փորձ բանիս, արդ ընկալաւ Յանձնաժողովս ի կալկաթայէ և

ի Ռանդոնէ մի քանի փոքրիկ այլ միտիթարական նուէրք՝ որոց ի յետուստ, պիտի դան ընդ ծով ընդ անապատ անցանելով, հայրենեաց սարերն ողջունող օգնութեանց օրհնութեանց ոգեթուիչ սիրափետուր երամներ :

Աստ Յանձնաժողովս, իւր հաւաքած դրամնց աղբիւրներն և սոցա հաւաքման և մատակարարութեան ողին պարզելէ յետոյ, պարտաւորութեանց մեծագունին ծանուցմանն կը մատչի, արդեանցն իւր աշխատութեանց, առանց որոյ ի բարեգործութիւն կրկին յուսալ անկարելի է :

Կեդր. Յանձնաժողովս, կը փութայ նախ իմացուցանել թէ, յետ առաջին փորձառութեան, իւր դրութիւնն գրեթէ միշտ կարօտելոց ուղղակի արմտիք և հաց տալ եղած է : Եւ ի Հայաստան, սառնամանեօք պատեալ, երբ չէր կարելի արմտիք մուծանել, իւր ամենայն ճգունքն ոսկւոյ հրապուրանօք ծածկեալ ամբարաց դրանցն բացման ծառայեցուցած է, և համարձակութեամբ կարէ ասել, թէ հրապոյրս այս, գաւառական Մասնաժողովոց աշարջութեամբն, հրաշալիս գործած է :

Մակայն Յանձնաժողովոյս բուն յաջողութեան աղբիւրն, ոչ իւր համեստ դանձն, այլ իւր ներկայութիւնն եղած է, քանզի սովեալ գաւառաց ժողովուրդք, իւրեանց կարողութեանց զթերին ընդ ջանադիր մարմին մի ի Յանձնաժողովոյս տեսանելով, այնպէս առատաձեռն օգնած են իրերաց, զի մերթ հաւասարապէս կերակրեալ, այսօր ամենայ դաւք, կարեմք ասել, թէ հաւասարապէս սովեալ մնացած են :

Գարնանային վարուցանից գալով, Կեդր. Յանձնաժողովս խոստովանել կը պարտաւորի, թէ ի կամացն անկախ յապաղմանց, անյաղթելի դժուարութեանց և ցաւալի կացութեանց պատճառաւ, որչափ փափաքելին էր, չէ կարացած յայսմ մասի յաջողել, թէ և շնորհիւ արիութեան իւր գաւառական մասնաժողովոց, շարժում տալով սովելոց կմախքներու, բաւական արմտիք սերմանել տուած է այլ և այլ սովեալ գաւառաց մէջ :

Թէև այսպէս, այլ Յանձնաժողովս ոչ վհատեալ, սովոյն յետադարձն իսկ խափանել խորհելով, ցորենոյ ընկեր, սննդարար նոր մի բոյս ի հայրենիս մուծանել ձեռնարկեալ, 20000 օրինակօք գետնախնձորի մշակութեան հրահանգ, Հայերէն և Տաճկերէն գրով և լեզուաւ, ամբողջ փոքր Ասիոյ մէջ սփռած է : Սակայն ցորենոյ համեմատութեամբ այս բուսոյ դժուարին մշակութենէն, անասնոց պակասութենէն, հողագործին մարմնոյն տկարութենէն, և ժամանակի սղութենէն կաշկանդեալ, վերոյիշեալ հրահանգաց զուսումն յանձնարարելով, միայն ի վան չափաւոր, իսկ ի Բասէն առաւել մեծ քանակութեամբ գետնախնձոր ցանել տալով շատացեալ, ի Բասէն սերմանեալ գետնախնձորոց հասոյթն Պայտղիտի և Ալաշկերտի վերապահած է :

Յանձնաժողովոյս ուշադրութեան մի կէտն իսկ, դիւրահաս կորեկի մշակութիւնն եղած է, որոյ համար վասն վանայ աշխարհին ամօք յառաջ անօրինութիւններ ըրած և այսօր իւր պատուիրած կորեկի չափոյն կէտն ի վան մուծանել և սերմանել տալ յաջողած է, և այս միջոցի մէջ թէ և յարքունի գանձէն վանայ ձկնորսութիւնն վարձելու և սորա հասոյթն անխորաբար ամենայն ազգի սովելոց յաակացուցանելու ամենայն հնար խորհած է, այլ ճգանցն հակառակ ոչ յաջող ելից յայսմ ձեռնարկութեան պատահած է :

Մակայն ոչ աստ կը յանդին Յանձնաժողովոյս ջանք :

Եռանդեամբ ստանձնած իւր պաշտօնին ամենակարեւոր և բազմաժախ մասն յամարան ճանաչելով, անխախտ ի հաւատ իւր ի բարեգործութիւն, անդր քան զներկայ կարողութիւն, իւր գանձուն, հրաման ստացման տուած է արմտեաց և հողագործական անասնոց՝ որոց երկու հարիւր զոյգն արդէն գնուած են, որք պիտի բաժանին համեմատ վիճակագրական ծանօթութեանց, զորս ի վերջ իւր պաշտօնին համեմատական ձեով ի յետին իւր տեղեկագրի պիտի հրատարակէ :

Ահա այս են առ այժմ Կեդր. յանձնաժողովոյս աշխատութիւնք :



Յանդատրաստից կազմեալ և աստիճանաբար ահագնութեանն սովոյ ծանօթացեալ, աճապարանօք, միանդամայն երկիւղածութեամբ, բարեգործութեան հրաւեր կարգալու պարտաւորեալ, Յանձնաժողովս առաւել յոյս ի սովեալս ներշնչած է, քան թէ պիտոյիցն բաւած ։

Արմտիք, գարնան ներկայութեան և զօշաբաղաց խոնջեալ համբերութեան շնորհիւ, թէ և թեթեւ ինչ ի կողմանս կողմանս Հայաստանեայց աժանացած են, սակայն ընդհանրապէս թանկագին, և ի տեղիս տեղիս Պայազիտի Ալաշկերտի և Վանայ, ճիշդբառին իմաստով, անդին անգամ են, զի այս աշխարհաց մէջ զօշաբաղաց անողորմութեան ամբարք անգամ դատարկացեալ են ։

Սով ի մէջ սովոյ այսօր զՀայաստան կը պաշարէ, զի այս սարևանդի Տաճկական մասին նման Ռուսական և Պարսկական սահմանք իսկ սովեալ են, այնպէս որ զարմտիս տեղափոխելու և զուգակշռելու կատարեալ կարողութիւն ենթադրելով անգամ, չէ կարելի զՀայաստան, ոչ իւր բերքով չափաւորապէս, ոչ Միջագետոց հունձով իմաստնաբար կերակրել, առանց ծովափնեայ աշխարհաց ամբարացն օգնութեան, որոյ շարժում տալ գործ է միայն ահագին դրամական կարողութեան, այլ ո՛ւր այս կարողութիւն, հանդերձ իւր ապահովութեամբ ։

Խոտակերութիւն՝ Հայաստանեայց սովեալ աշխարհաց այսօրեայ սննդականութեան գլխաւոր ձևն է ։ Կերակուր խոտոյ թէ և չէ արդարև մահառիթ, այլ չափազանցեալ, ինքնին հրապուրիչ է հիւանդութեանց որք, արդէն ճարակեալ, որք արդէն անլիութեան, գիշակերութեան, չար սննդեան ժանտ ծնունդք, անգերեզմանի մնացեալ դիականց դարչահոտութեան և սովելոց արկարացեալ կազմութեանն պատճառաւ կրկին և կրկին պիտի սաստկանան յամարան, լնրով այն հիւանդանոցն՝ այն որբանոցն՝ զորս Յանձնաժողովս այսօր բանալ պարտաւորած է ի վան ։

Ապագայի գալով կը փութամք ծանուցանել, թէ ի բաց հանեալ Հայաստանեայց սովեալ գաւառաց անմչակ մնացեալ ան-

բաւ դաշտերն, ներկայ սովոյ պատճառանայն բնական հետևութեամբ, Հայաստանեայց ամենայն գաւառաց աշնանային ցանք, միջին հաշուով, չափաւոր քանակութեամբ եղած են ։

Թէ և յերեսաց կանոնաւոր անձրեաց, արդ դաշտք մշակութեան աստ և անդ կը ժպտին, այլ չէ մեզ ներքի ՚ի մասնական երևոյթս այս վատահանալ, զի ոչ որ կարէ այժմէն մշակութեան յաջող ելից վերայ զմեզ ապահովել, ոչ որ կարէ ի ժամ հնձոց և քաղոց, արդէն խռովարար ծոյլ քաղցերոց խաղաղակեաց վարքն մեզ երաշխաւորել, որով հարկ է մեզ միշտ յառատութեան ապագայ հնձոց անգամ, ամենայն հեռատեսութեամբ գործել, զի յաշխարհիս, որչափ սով կայ դրամական, սոքն հացի պայմանափոխ եղեալ, յօգուտ վաշխառու դասուն միշտ կարէ յարատեւել ։

Հեռատեսութեան աւանդեալ կարևոր խնդրոց մին է նաև, Հայաստանի սովեալ գաւառացն անասնոց ցաւալի վիճակն ։

Արդ առ հասարակ այս աշխարհաց մէջ անասունք յերեսնէ սկսեալ՝ մինչև ցլինսուն և եօթն հարիւրին համեմատութեամբ պակասեալ են, և մնացելոց բազումք տկար կամ ախտաւորեալ են, ի մեծ յուսահատութիւն հողագործին որ մի քանի ամիս վերջ, ի դուռն հնձոց, չունելով բանջարեղինաց մշակութիւն, չունելով անգամ գարնան դալար խոտ, գուցէ թերահաս իւր հընձոցն սնանիլ պիտի հարկադրի, այնպիսի ժամանակ՝ ուր հողագործն, պէտք է որ իւր ամենայն կարողութեամբ զինեալ, ոչ միայն իւր աշխատութեան պտուղն ամբողջ քաղէ, այլ պահպանէ, պաշտպանէ և կրկին սերմանէ ։

Հնձոց եղանակի դեռ երեք երկայն ամիսներ կան, այժմէն Հայաստանեայց սովեալ գաւառաց ամբարք դատարկացեալ են ։ Ոչ սովորական առատ հաց կայ իբրև սնունդ, ոչ մաքուր հաց կայ իբրև դեղ, ի Պայազիտ և յԱլաշկերտ ոչ աղ կայ կենդանութեան պայման, ոչ ըստ անբաւ պիտոյից աշխարհին անասունք կան հողագործին օգնական, և ոչ դրամ կայ աղ և հա-

ցի և անասնոց որպէս անասնային վարուցանից հարկաւոր եղած սերման ստացմանն բաւական : Քաջի դիակ աստ լերին գլուխն կը ծածկէ, հեղին դիակ անդ սորա ստորոտն կը գրկէ, ծերուն դիակ մերթ տաճարին դռուն կը կնքէ, աստ վարժարան դռնիակ, անդ դիւղ մի կէս հոգեվարք, մերթ գիւղ մի իւր մշակեալ դաշտն անդամ ձգած, ու ցաւեր շղկած աշխարհահեծ կը գաղթէ :

Ահա այս են ցաւք զորս մարդասիրութիւն Յանձնաժողովոյս խնամել հրամայեց :

Աշխատեցաւ, վաստակեցաւ Յանձնաժողովս, որչափ եռանդեամբ իւր պարտուց փարեցաւ, այնչափ սոցա ամբաւութեան պատկերն յոգի իւր մեծացաւ, այլ ուրախ է ասել թէ ընդ խղճի իւր պարտաւորութեանց և վատհուծիւն իւր ի բարեգործութիւն անեցաւ :

Ուստի Յանձնաժողովս, իրաւամբ սոյն յուսոյ զոր բարեգործութիւն սովեալ գաւառաց ներշնչել հաճեցաւ, կուգայ այսօր երախտագէտ սրտիւ սորա նոր մի ջերմ հրաւեր կարդալ :

Յոյս մեծ ունի թէ՛ առաքինութիւնք այնքրիկ որք ի ճանապարհի իւր աշխատութեանց իւր զօրավիզն եղեն՝ չ'պիտի լքանեն զինքն անօգնական ի կէս իւր գործոյն, և ոգի գթութեան սաւառնելով յորրոտս Հայաստան աշխարհին, զուարթառատ նորանոր պարգևօք զթերին պիտի ընու մշակութեան, ի պահպանութիւն Ասիական ընտիր մարդոց տանն և սեռին :

Ի դիմաց սովելոց խնամող կեդր. Յանձնաժողովոյ

1880 Յունիս 11/23

ԱՏԵՆԱԴՊԻՐ

ԱՏԵՆԱՊԵՏ

Կ. Պօլիս Քաղկեդոն

Պօլոս Թ. Շաշեան

Սերովէ կեդր. կենտրոն

« Ազգային գրադարան



NL0248777

